

լոր հաստատութեանց հոգին դարձած էր, և որ նշանաւոր հանգիստացաւ նաև իր առաքինական առատաձեռնութեամբն: 513-518 ի պաղեստինեան սովին, Թէոդոս «հասարակաց գանձանակն» եղած էր, ինչպէս կը գրէ Մետափրաստ, իր կենսագիրը. ան ժողովրդական ղէմք մը եղած էր իր դարուն, լաւագոյն յարաբերութիւններ կը մշակէր Մար-Սարայի, և այլոց հետ. 529 Յունուար 11 ին վախճանեցաւ, գրեթէ հարիւր տարեկան, ժողովրդական բացառիկ յուզարկաւորութեամբ իր մարմինը ամփոփուեցաւ Մոզերու Քարայրին մէջ: Իր հիմնարկութեան տարեգարձի յիշատակը սովորութիւն դարձաւ տօնել Մայիս 6 ին և Դեկտ. 2 ին, համաձայն Երուսաղէմի ծիսարանին:

Արևելցի ղէմք մըն էր Թէոդոս, և ան իր վանքին մէջ մասնաւոր սէր ցոյց կու տար Արևելքէն եկող բոլոր իր հայրենակիցներուն: Իր ժամանակակից կենսագիրը՝ Սկիւթուպոլսեցին կը յիշէ թէ Թէոդոս իր վանքին մէջ հիմնած էր արևելեան վանականաց համար ուրոյն եկեղեցիներ՝ ուր իրենց լեզուաւ կը կատարէին սաղմոսերգութիւն և պատարագ: Այս վանականաց մէջ մեծ թիւ մը կը կազմէին Հայերը, որ ունէին իրենց յատուկ եկեղեցին: Բայց այս առթիւ պէտք է յիշել թէ Ս. Տեղեաց մէջ արևելեան վանականաց յատուկ այդ կանոնական սովորութիւնը կը յիշատակուէր նոյն իսկ Յերոնիմոսի (331-420) օրով. վերջնոյս Մէ. համակիւն մէջ, կը կարդանք հետևեալը. «Ի՞նչ պիտի ըսենք Հայաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եթովպիոյ, Պոնտոսի և Կապագովկիոյ վանականներով ճոխացեալ երկիրներու մասին. ասոնք կը հաւատարին Եգիպտոսի, Խորին Ասորուոց, Միջագետքի բոլոր այն միայնակեաց խումբերուն որ Արևելքէն զրկուած են, և ասոնք են որ մեզ կ'ընծայեն ամէն առաքինութեանց տեսակները. լեզուն տարբեր է, բայց բարեպաշտութիւնը նոյնն է. որքան ազգեր կան աշխարհի մէջ, գրեթէ նոյնքան խումբեր՝ որ կը ստորմուկն յԵրուսաղէմ: Այս քաղաքին մէջ այնքան ազօթքի տեղեր կան որ մէկ օր չի բաւեր անոնց այցելութիւն տալու համար. (Տե՛ս F. Lagrange, Lettres choisies de S. Jérôme, էջ 160): Յերոնիմոսի այս չքնաղ տողերը կարելի է կարևոր յիշատակարան մը նկատել հայկական ծիսարանի կազմութեան և Ս. Գրոց, գոնէ Սաղմոսաց, հայ թարգմանութեան նախնականութեան, Ե. դարէն յառաջ. մի և նոյն ժամանակ անհերքելի ապացոյց մը թէ